Կացութիւնը առանձնապէս ծանրանում էր և ընդհանուր դժոխային պայմաններով. Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, երկիրը բոլորովին կտրուած արտաքին աշխարհից՝ խճողուած էր բազմահազար գաղթականներով, որոնք թափուած էին գիւղերում ու քաղաքներում և ճանապարհների վրա: Էջմիածին–Երեւան, Երեւան–Դիլիջան խճուղու վրա խռնւում էին աննպատակ շարժուող գաղթականներ, սայլեր և անասուններ: Երկաթուղին չէր գործում: Պարենաւորման տաղնապը օրէցօր սրւում էր. հացն ու ապրուստի այլ միջոցները դժուարութեամբ էին ճարւում: Այստեղ ու այնտեղ երեւում էին համաճարակ հիւանդութիւններ: Ժողովրդի և զօրքի հոգեկան վիճակը ընկճուած էր անսահման:

Այսպիսի դրութեան մէջ, թիւրքերի ընդհանուր յարձակումը մի պահ Երեւանում առաջ բերեց անասելի իրարանցում ու սարսափ: Դիմադրութիւնը շատերին թւում էր անհնար և անիմաստ: Ցաղթութեան վստահութիւն չէին ներշնչում և մինչեւ այդ բանակից հասնող տեղեկութիւնները. զօր. Սիլիկեանի հաղորդագրութիւնները մռայլ գոյներով էին ներկայացնում զօրամասերի դիմադրական կարողութիւնը: Բնակչութիւնը պատրաստւում էր փախստի:

Բայց ո՞ւր փախչել: Ճանապարհները դէպի Թիֆլիս ու Բաքու փակուած էին ամուր: Պարսկաստան տանող երկաթուղին չէր գործում. Շարուր–Նախիջեւանը մահմեդականների ձեռքին էր: Իսկ հարաւից և արեւմուտքից թիւրքն էր դալիս՝ կոտորելով հանդիպող հային: Փախուստը այս պայմաններում հաւասար էր մահուան, ինչպէս և անձնատուր լինելը: Ելք չկար: Ելքը դիմադրութիւնն էր, կռիւը. քանի որ մահը անխուսափելի է, դէթ պատուով մեռնել: Մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ փրկութիւն չկայ: Եւ ահա կատարւում է հրաշքը՝ մէկը այն հրաշքներից, որոնք դալիս են բոլորովին չսպասուած և փրկում անյոյս համարուած կացութիւնները: Ժողովուրդը, նրա առաջնորդները, զօրքը, ամենքը համակւում են մէկ գիտակցութեամբ. — յաղթել կամ մեռնել:

Եւ Արարատեան դաշտի ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում: Գործում են ամենքը: Ազգային Խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը: Հրամանատարութիւնը կարգաւորում ու բարձրացնում է զօրքի մարտական ոյժը: Զօր. Սիլիկեանը մի շարք հրամաններով ու կոչերով խրախոյս է ներշնչում զինուորներին ու հասարակութեան: Ամենքը լծւում են թիկունքային աշխատանքի: Կանայք, օրիորդներ՝ ուտելիք, ծխախոտ, վիրակապներ են պատրաստում: Հոգեւորականութիւնը խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու զօրքի մէջ: Գարեգին եպ. Ցովսէփեանը շրջում է մի մասից միւսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում է զօրքի տրամադրութիւնը: Կրկնւում էին Վարդանանց պատմական օրերը...

Երբ մայիս 21–ին երկաթուղու ընթացքով շարժուող թիւրքերը երեւացին Սարդարապատի մօտ, այլեւս իրենց առջեւ դատն յաղթելու վճռականութեամբ տոգորուած հայ զինուորին: Մօտաւոր հաշուով, զօր. Սիլիկեանի զօրքի